



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական  
աշխատողների մասնագիտական կարողությունների և  
հմտությունների զարգացման» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների  
զարգացումը նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Է. Այվազյան

Մանկապարտեզ՝ «Գորիսի թիվ 7 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

2022թ

**ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Ներածություն.....4

2. ՊԼՈՒԽ 1. Երեխայի տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման ձևերը, միջոցները և տարբերակները.....7

- Մաթեմատիկայի պարապմունքները որպես նախադպրոցականների մաթեմատիկական պատկերացումների զարգացման հիմնական ձև.....7
- Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման միջոցները մանկապարտեզում.....8
- Պարապմունքների ժամանակ դիդակտիկ նյութերի օգտագործումը.....9
- Մինչթվային հասկացություններ.....9
- Քանակական պատկերացումների զարգացումը.....10
- Երկրաչափական պատկերների և մարմինների մասին պատկերացումների ուսուցման առանձնահատկությունները.....11
- Դիդակտիկ խաղերի դերը տարրական մաթեմատիկական գիտելիքների ամրապնդման գործում.....12
- Պարզ խնդիրների ուսուցումը, կռահման խնդիրները՝ մտավոր զարգացման միջոց.....16
- Մանկական գրականությունը և տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը.....17
- Պարապմունքի պլանավորումը և հաշվառումը.....18

3. ՊԼՈՒԽ 2. Պարապմունք, <<Ծանոթացում 3 թվին և թվանշանին>>.....20

- Պարապմունքի պլան.....20
- Պարապմունքի ընթացքը՝ ըստ վերը նշված պլանի.....23
  - Խթանման փուլ.....23
  - Իմաստի ընկալման փուլ.....25
  - Ֆիզկուլտ դադար.....30
  - Կշռադատման փուլ.....30
  - Աշխատանք արվեստի կենտրոններում.....31
- Տնօրենի և դաստիարակի դիտարկումները.....32

4. Եզրակացություն.....34

5. Գրականության ցանկ.....	36
---------------------------	----

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*<<Ուսուցումը և զարգացումը չեն համընկնում անմիջականորեն, այլ իրենցից ներկայացնում են երկու շատ բարդ փոխհարաբերության մեջ գտնվող պրոցեսներ: Ուսուցումը միայն այն ժամանակ է լավ, երբ ընթանում է զարգացումից առաջ: Այդ ժամանակ այն արթնացնում է և կյանքի կոչում զարգացման փուլում գտնվող մի շարք ֆունկցիաներ, որոնք ընկած են մոտակա զարգացման գոտում>>:*

### Լ. Ս. Վիգոտսկի

Մաթեմատիկայի ուսուցումը մանկապարտեզում երեխաների իմացական ընդունակությունների սիստեմատիկ, մտավոր զարգացմանը նպաստող գործընթաց է, որի ժամանակ երեխաներին հաղորդվում է գիտելիքների որոշակի համակարգ:

Մաթեմատիկական ուսուցումը երեխաների մտավոր զարգացմանը նպաստող իմացական ընդունակությունների համակարգված ու հետևողական գործընթաց է: Տարրական մաթեմատիկայի պատկերացումների ձևավորման և զարգացման միջոցներն են՝ մաթեմատիկայի պարապմունքները, դիդակտիկ, զարգացնող, մրցակցային, ինտելեկտուալ խաղերը, զբոսանքները, պարապմունքների զանազան տեսակների կապերը:

Երեխան ընկալունակ է և ունի նորով հիանալու ու զարմանալու բացառիկ կարողություն: Նա ցանկանում է իր համար բացահայտել անհայտը, որոնել յուրահատուկը և տարբեր իրավիճակների համար ոչ ստանդարտ լուծումներ գտնել:

Մաթեմատիկայի յուրաքանչյուր պարապմունք պետք է նպաստի երեխայի իմացական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Ուստի ուսուցման գործընթացում հարկավոր է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան շահագրգռված լինի աշխատելու և հետաքրքրությամբ կատարելու իր առջև ծառայած խնդիրները:<sup>1</sup>

Ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության պայմաններում մաթեմատիկայի պարապմունքներն անսպառ հնարավորություններ են ընձեռնում երեխայի ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Նմանատիպ աշխատանքները մաթեմատիկայի նկատմամբ հետաքրքրություն են առաջացնում և երեխային սովորեցնում մտածել ու դատողություններ անել: Այսօր ուսուցման արդյունաբետությունը չափվում է ոչ միայն երեխայի

<sup>1</sup> Նախաշավիղ 5, Գիտամեթոդական հանդես, Կրթության ազգային ինստիտուտ հրատ., Երևան, 2010, էջ 21:

ստացած գիտելիքների ծավալով, այն նրանց ձեռք բերած հմտություններով և կարողություններով: Դաստիարակն այս գործում պետք է լինի երեխայի կողքին, օգնի նրան, վստահություն ներշնչի, ոգևորի ու միաժամանակ ապահովի զարգացնող ուսուցում:<sup>2</sup>

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում ունի հետևյալ հիմնական նպատակը. նախադպրոցականին նախապատրաստել դպրոցին՝ սովորեցնելով հաշվել, չափել, համեմատել, տարրական մաթեմատիկական գործողություններ կատարել, բացահայտել շրջապատող առարկաների մեծության հատկանիշները, երկրաչափական պատկերները, նպաստել հոգեկան գործընթացների և հատկապես մտածողության զարգացմանը:

Նախադպրոցական տարիքում տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումն ու զարգացումը ներառում է ծրագրային երկու հիմնական խնդիր. նախաթվային կամ մինչթվային և թվային կամ քանակական:

Նշված թեմային վերաբերող ուսումնասիրություններ, ծրագրեր և ձեռնարկներ են կազմել Լ. Մանուկյանը, Հ. Միտոյանը, Ս. Չիրուխյանը, Լ. Մետլինան, Հ. Հարությունյանը և ուրիշներ: Արժեքավոր և օգտակար նյութեր կան նաև «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդեսի տարբեր համարներում:

**Հետազոտության նպատակը** – Ընտրել են «Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում» թեման՝ նպատակ ունենալով ցույց տալ երեխայի կյանքում տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման կարևորությունը: Այս պատկերացումների զարգացման համար կարևոր և անհրաժեշ է 1. պարապմունքների ճիշտ կազմակերպում, 2. նյութի մատչելի ուսուցում, 3. հետաքրքրաշարժ ու բովանդակալից խաղերի միջոցով մաթեմատիկական մտածելակերպի խթանում, 4. ոչ շատ բարդ, և ոչ էլ շատ հասարակ կամ հեշտ մաթեմատիկական խնդիրների ճիշտ ընտրություն, 5. ստեղծագործական մոտեցում (հիարկե՛, չանտեսելով՝ մանկավարժների, հոգեբանների ու տեսաբանների կողմից մեզ տրամադրվող տեսական և ուսուցողական նյութերը) և վերջապես 6. երեխաների նկատմամբ յուրահատուկ հոգատար վերաբերմունքի դրսևորում:

**Հետազոտական աշխատանքի ընթացքն ու բաժինները** - աշխատանքն ունի.

**ա)** բովանդակություն, որում ըստ հաջորդականության՝ ներկայացված են գլուխներն՝ իրենց ենթավերնագրերով, **բ)** ներածական մաս, որում տրվում է թեմայի վերաբերյալ որոշակի պատկերացում, և նշվում են հետազոտության նպատակները, **գ)** երկու գլուխ, որոնցից

---

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 22:

առաջինում տրվում է թեմայի վերաբերյալ տեսական նյութ, երկրորդում՝ խումբը, որում կատարվել է հետազոտությունը, պլանը՝ ըստ որի իրականացվել է համապատասխան պարապմունքը, պարապմունքի միջավայրը, նյութերը, դաստիարակի գործողությունները, հարցերը, որոնք ուղղվել են երեխաներին, դիտարկողների կարծիքները պարապմունքի և կատարված աշխատանքի վերաբերյալ, **դ)** եզրակացություն, որում կետերով նշված են որոշակի նկատառումներ և երգահանգումներ և **ե)** գրականության ցանկ, որում ըստ այբբենական հաջորդականության՝ նշված են գրքերը, որոնք անհրաժեշ են եղել հետազոտության ընթացքում:

## **ՊԼՈՒԽ 1. ԵՐԵՒԱՅԻ ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ**

Մաթեմատիկական ուսուցումը երեխաների մտավոր զարգացմանը նպաստող իմացական ընդունակությունների համակարգված ու հետևողական գործընթաց է: Տարրական մաթեմատիկայի պատկերացումների ձևավորման և զարգացման ձևերը, միջոցներն ու տարբերակներն են՝ մաթեմատիկայի պարապմունքները, դիդակտիկ, զարգացնող, մրցակցային, ինտելեկտուալ խաղերը, զբոսանքները, պարապմունքների զանազան տեսակների կապերը, մինչթվային հասկացությունները, քանակական պատկերացումները, պարզ և կոռահման խնդիրները և այլն:

### **Մաթեմատիկայի պարապմունքը որպես նախադպրոցականների մաթեմատիկական պատկերացումների զարգացման հիմնական ձև**

Մանկապարտեզում ուսուցումը տարբերվում է դպրոցում անցկացվող ուսուցումից: Մանկապարտեզում հաղորդվում են ծավալով փոքր և տվյալ տարիքի համար մատչելի գիտելիքներ: Ի տարբերություն դպրոցի, երեխաները չեն ստանում տնային առաջադրանք, գրավոր աշխատանքներ չեն կատարում: Այլ են մեթոդները: Ավելի շատ առաջադրվում են զննական, խաղային և զվարճալի հնարներ՝ ելնելով նրանց անհատական առանձնահատկություններից: Կարևորը երեխաների ձեռք բերած մաթեմատիկական գիտելիքների վերջնական արդյունքն է:

Պարապմունքները պետք է ճիշտ կազմակերպվեն, որպեսզի տան անհրաժեշտ արդյունք: Նոր գիտելիքները երեխաներին տրվում են աստիճանաբար՝ այն բանի հաշվառումով, ինչ նրանք արդեն գիտեն և կարող են: Որոշելով աշխատանքի ծավալը՝ կարևոր է չթերագնահատել և գերագնահատել երեխաների հնարավորությունները, քանի որ և՛ մեկը, և՛ մյուսը կհանգեցնեն նրանց անգործությանը պարապմունքների ժամանակ:

Պարապմունքների ժամանակ դաստիարակը հետևում է երեխաների վարքին: Պարապմունքների ժամանակ երեխաների վիճակին հետևելը շատ կարևոր է, քանի որ հոգնածությունը կարող է հանգեցնել պարապմունքի նկատմամբ հետաքրքրության կորստի:<sup>3</sup>

<sup>3</sup> Լ. Ս. Մետլինա, Մաթեմատիկական մանկապարտեզում, Երևան, <<Լույս>>, 1988, էջ 11:

Մաթեմատիկայի յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ դաստիարակը օգտագործում է զանազան մեթոդներ.

1. Բառային (բացատրում, պատմում, հարցեր)
2. Դիտողական (առարկայի, նկարի ցուցադրում, երկրաչափական պատկերներ և մարմիններ)
3. Պրակտիկ (աշխատանք անհատական նյութերով)
4. Խաղային (դիդակտիկ, զարգացնող, զվարճալի, մրցակցային)
5. Գրաֆիկական առաջադրանքներ.<sup>4</sup>

Դաստիարակը բոլոր պարապմունքներին պետք է հետևի իր և երեխաների խոսքին, եզրույթների ճիշտ օգտագործմանը: Նա չպետք է շփոթի <<թիվ>> և <<թվանշան>> բառերը, <<թվերից ո՞րն է մեծ>> և <<ո՞ր թվանշանն է մեծ>> արտահայտությունները:

### **Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման միջոցները մանկապարտեզում**

1. Մաթեմատիկայի պարապմունքներ:
2. Դիդակտիկ զարգացնող, զվարճալի, մրցակցային, ինտելեկտուալ խաղեր:
3. Պարապմունքների զանազան տեսակների կապը (մայրենի լեզու, ապլիկացիա, նկարչություն, ֆիզկուլտուրա, երաժշտական):
4. Չբոսանքներ, էքսկուրսիաներ:

---

<sup>4</sup> Լ. Մանուկյան, Ն. Միտոյան, Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Երևան, 2008, էջ 84:



## **Պարապմունքների ժամանակ դիդակտիկ նյութերի օգտագործումը**

Ուսուցման յուրահատուկ ձևերից է դիդակտիկ նյութերով հաշիվ սովորեցնելը: Մանկապարտեզում դիդակտիկ նյութերը միջոց են հանդիսանում, երեխաների ուշադրությունը գրավելու և հաշիվ սովորեցնելու համար: Դիդակտիկ նյութերի օգնությամբ երեխաները լավ են հասկանում ուսուցանվող նյութը, ավելի հանգիստ ու հավասարակշռված են դառնում՝ նախապատրաստվելով դպրոցական ուսուցմանը:

Դիդակտիկ նյութերը պետք է լինեն հետաքրքիր, հաճելի և մաքուր: Կարևոր է իմանալ, որ չի կարելի միշտ նույն դիդակտիկ նյութերն օգտագործել, քանի որ դա կնվազեցնի երեխաների հետաքրքրությունը ուսուցանվող նյութի նկատմամբ: Բացի այդ, երեխան թիվը միշտ կապում է միայն տվյալ առարկայի հետ և կարծում է, թե առարկան փոխվելիս կարող է փոխվել նաև հաշիվը և, հետևապես, ընդհանրացում կատարել չի կարողանում: Մաթեմատիկայի յուրաքանչյուր պարապմունք պետք է դիդակտիկ պարագաներով հագեցված լինի. հաշվիչ փայտիկներ, խորանարդներ, օղակներ, գավաթներ, ափսեներ և այլն:

Դասիարակը պետք է հիշի, որ պարապմունքների ժամանակ օգտագործվող դիդակտիկ զանազան նյութերը նպատակ չեն, այլ միայն ու միայն միջոց երեխաների վերացական մտածողությունը ձևավորելու գործում:

## **Մինչթվային հասկացություններ**

Ուսուցման նախաթվային շրջանը նախապատրաստական է համարվում չի միայն հաշվի ուսուցման համար: Փոքրերի խմբում մեծ ուշադրություն է դրձվում առարկաների միջոցով կատարվող համեմատական վարժություններին՝ ըստ երկարության, լայնության, բարձրության և ծավալի: Երեխաները նախնական պատկերացում են ստանում մեծությունների և նրանց հատկությունների մասին, նրանց սկսում են ծանոթացնել երկրաչափական պատկերներին, սովորեցնում տարբերել և անվանել շրջանը, եռանկյունին, ճանաչել այդ պատկերների մոդելները՝ անկախ նրանց գույների և չափերի տարբերությանը: Նրանց սովորեցնում են կողմնորոշվել

տարածական ուղղությունների՝ առաջ, հետ, ձախ, աջ, ինչպես նաև ժամանակի մեջ՝ ճիշտ օգտագործելով առավոտ, օր, երեկո, գիշեր բառերը:<sup>5</sup>

Ուսումնական տարվա առաջին պարապմունքներին պետք է ամրապնդել միջթվային հասկացությունները, որոնք բաժանվում են մեծության՝ մեծ-փոքր, լայն-նեղ, շատ-մեկ, շատ-քիչ, հաստ-բարակ, բարձր-ցածր, հավասար-անհավասար, և տարածական՝ աջ-ձախ, վերև-ներքև, հեռու-մոտ, վրա-տակ, առջև-ետև հասկացությունների: Այս հասկացություններն ամրապնդելու ժամանակ պետք է երեխաներին հանձնարարել համեմատել երկու կոնկրետ առարկաներ՝ կոնտրաստ չափի, որպեսզի ակնառու լինի տարբերությունը: Այնուհետև կարելի է տալ համեմատելու 4-5 առարկա և առաջարկել դրանք դասավորել աճման կամ նվազման կարգով՝ ըստ մեծության, լայնության, հաստության, բարձրության և այլն: Այս հասկացությունները կարելի է ամրապնդել նաև խաղերի, դիտումների, զբոսանքների և մանկական գրականության ընթերցանության ժամանակ:

### **Քանակական պատկերացումների զարգացումը**

Քանի որ ուսումնական տարվա սկզբում երևելի է, որ երեխաները ամառվա ընթացքում որոշ չափով կորցրել են գիտելիքները, և դրա հետ մեկտեղ, միջին խումբ են եկել նոր երեխաներ, ապա անհրաժեշտություն է առաջանում մի քանի պարապմունք հատկացնել անցածի կրկնությանը և նախապատրաստել երեխաներին նոր նյութի ընկալմանը: Ամրապնդում են հիմնականում այնպիսի պատկերացումները, ունակություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են հաշիվն ուսուցանելու և թվերին ծանոթացնելու համար:

Տարբեր քանակական կազմ ունեցող առարկաների խմբերով կատարվող գործողությունները երեխաների մեջ արթնացնում են նրանց քանակը ճշգրիտ որոշելու ցանկություն: Ստեղծվում են պայմաններ հաշիվը յուրացնելու համար:

Հաշվի ուսուցումը պետք է կառուցվի այնպես, որ երեխաներն ըմբռնեն՝ ինչպես է ստացվում յուրաքանչյուր հաջորդ թիվ, այսինքն՝ թվերի բնական շարք կազմելու ընդհանուր սկզբունքը: Հաշվի ուսուցումը պետք է օգնի երեխաներին տվյալ գործունեության նպատակը հասկանալու հարցում:

---

<sup>5</sup> Տես՝ Մաթեմատիկական մանկապարտեզում, էջ 10:

Հաշվելու կարողությունների զարգացումը պահանջում է մեծ քանակությամբ վարժությունների լուծում: Քանակային պատկերացումների զարգացման համար կարևոր է ուղիղ և ետ համրանք կատարելը:

Մաթեմատիկայի յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ երեխաներին առաջադրվում է կատարել բանավոր հաշիվ, որի շնորհիվ նրանք արդեն թվերի այդ բնական շարքը պատկերացնում են որպես անփոփոխ համակարգ և այդ շարքում կարող են գտնել յուրաքանչյուր թվի տեղը: Որպեսզի ուղիղ և ետ համրանքը չկրի մեխանիկական բնույթ, երեխաներին պետք է առաջարկել նաև հաշվել որոշակի երկու թվերի սահմանում՝ 2-6, 3-9, 4-10, 8-2, 10-4, 9-1 և այլն, ինչպես նաև առաջարկել ցանկացած թվից համրանք կատարել:

Տարբեր առաջադրանքների միջոցով երեխան պետք է իմանա, որ յուրաքանչյուր կարգային թվին համապատասխանում է միայն մեկ առարկա, որը ցույց է տալիս տվյալ առարկաների խմբում նրա տեղը: Դրա համար պետք է տալ այսպիսի առաջադրանքներ.

- Ձախից հաշվել 5 խորանարդ այնպես, որ հինգերորդը լինի կարմիր գույնի:
- Հավաքապատասխանի վրա դնել երեք երկրաչափական պատկեր այնպես, որ երրորդը լինի քառակուսի:<sup>6</sup>

### **Երկրաչափական պատկերների և մարմինների մասին պատկերացումների ուսուցման առանձնահատկությունները**

Ուսումնական տարվա առաջին պարապմունքներին երեխան պետք է ճանաչի, տարբերի և անվանի երկրաչափական պատկերները՝ շրջան, ձվածիր, քառակուսի, քառանկյուն, եռանկյուն, ուղղանկյուն, երկրաչափական մարմինները՝ գունդ, խորանարդ, գլան, կոն:

Հետագա պարապմունքներին երեխաներին պետք է ծանոթացնել դրանց բնորոշ տարրերին (եռանկյունն ունի 3 կողմ, 3 անկյուն, 3 գագաթ, քառակուսին ունի 4 կողմ, 4 անկյուն, 4 գագաթ, բոլոր կողմերը իրար հավասար են և այլն): Պետք է ցույց տալ տարբեր տեսակի եռանկյունիներ՝ ուղղանկյուն, բութանկյուն, սուրանկյուն: Երեխաները կարող են չիմանալ դրանց անվանումները, բավական է իմանան, որ դրանք ունեն 3 կողմ, 3 անկյուն, 3 գագաթ, բոլորը եռանկյուններ են: Պարապմունքների ժամանակ երեխաները պետք է համեմատեն դրանք միմյանց հետ, գտնեն նմանությունները, տարբերությունները: Բացի այդ պետք է սովորեցնել

---

<sup>6</sup> Տես՝ Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, էջ՝ 86:

շրջապատոց առարկաները տեսնել որպես երկրաչափական պատկերներ (ափսե, կոճակ - շրջան, գրատախտակ, դուռ, լուսամուտ - ուղղանկյուն, տանիք - եռանկյուն և այլն), երկրաչափական մարմիններ (գնդակ, ձմերուկ - գունդ, խողովակ, բաժակ - գլան):

### **Դիդակտիկ խաղերի դերը տարրական մաթեմատիկական գիտելիքների ամրապնդման գործում**

Պարապմունքի ընթացքում ուսուցման առավել արդյունավետ միջոցներից մեկը դիդակտիկ խաղն է, որն անհրաժեշտ պարզաբանումների գուգորդմամբ դառնում է երեխայի ուսուցման առանձնահատուկ ձև, խաղի և պարապմունքի յուրօրինակ միաձուլում:

Դիդակտիկ խաղերը ընդգրկվում են պարապմունքի բովանդակության մեջ՝ որպես ծրագրային խնդիրների իրականացման միջոց: Դրանք պետք է բխեն պարապմունքի բովանդակությունից և նպաստեն դիդակտիկական ու դաստիարակչական նպատակների իրականացմանը: Խաղն իր տեղն ունի պարապմունքի կառուցվածքի մեջ և կարող է օգտագործվել որպես ուսումնական առաջադրանք, վարժություն՝ ուղղված կոնկրետ խնդրի իրականացմանը:

Խաղային առաջադրանքների միջոցով երեխաները հեշտությամբ են յուրացնում մաթեմատիկական հասկացությունները, կիսվում են ստացած գիտելիքներով, խաղային գործունեության միջոցով ճշտվում և ամրապնդվում են նրանց պատկերացումները թվերի, դրանց փոխադարձ կապի, երկրաչափական պատկերների, ժամանակի և տարածության մասին:<sup>7</sup>

Դիդակտիկ խաղը՝ որպես ուսուցանող խաղ, ունի երկակի բնույթ, գործունեության խաղային ձև և դիդակտիկ ուղղվածություն: Բոլոր պարապմունքներին պարտադիր պետք է անցկացնել դիդակտիկ խաղեր:

Մաթեմատիկական բովանդակությամբ յուրաքանչյուր խաղ ունի իր խնդիրը՝ զարգացնել բանավոր համրանքը, ծանոթացնել թվերի բնական շարքին, թվերի կազմությանը, թվանշաններին, երկրաչափական պատկերներին, մարմիններին: Խաղերի ընթացքում երեխաները դիտում են, համեմատում, կատարում վերլուծություն: Այդ խաղերի համար պետք է ունենալ գրավիչ ու հետաքրքիր դիդակտիկ նյութեր: Միևնույն դիդակտիկ խաղը կարելի է

---

<sup>7</sup> Ս. Չիբուխյան, Տարրական մաթեմատիկական պատկերագումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, Էդիթ Պրինտ, Երևան, 2014, էջ 5:

անցկացնել տարբեր նպատակներով՝ <<Անցի՛ր դարպասը>> (թվանշանների ճանաչման նպատակով), <<Գտի՛ր գույգդ>> (թվերի կազմության և թվանշանների ճանաչման նպատակով):

Դիդակտիկ խաղերը մաթեմատիկական մտախողության զարգացման լավագույն միջոցն են, ուսման ուրույն ձև, որը ոչ թե մտավոր լարված աշխատանք է խահանջում, այլ կրում է զվարճալի խաղի բնույթ, ընդ որում՝ ուսումնական առաջադրանքը երեխայի համար կլինի առավել հաճելի՝ դառնալով խաղային խնդիր:

### **Խաղերի օրինակներ**

#### 1. Խաղ - <<Ծիծաղաշարժ տիկնիկներ>>

Նպատակը - Վերհիշել երկրաչափական պատկերները:

Խնդիրները - Չարգացնել վերլուծական և տեսողական հիշողությունները, երևակայությունն ու հնարամտությունը, մասերից ամբողջ կազմելու հմտությունը:

Անհրաժեշտ պարագաներ - Երկրաչափական պատկերներից կազմված տիկնիկների նկարներ, տարբեր գույնի և չափի երկրաչափական պատկերներ, նկարագարդ տուփ:

Բովանդակությունը - Դաստիարակ

– Սիրելի՛ երեխաներ, փոստատարը այսօր մեզ ոչ սովորական տուփ և մի նամակ է բերել տիկնիկային թատրոնի տնօրենից: Եկե՛ք տեսնենք, թե ինչ է նա գրում: Նա գրում է, որ մի տխուր դեպք է տեղի ունեցել երկու տիկնիկների հետ: Տիկնիկային ներկայացումից հոգնած տիկնիկներին դրել են պահարանի վրա, իսկ նրանք այնքան խորն են քնել, որ գլորվել ու ընկել են ցած, վնասվել՝ բաժանվելով մասերի: Իսկ վաղը նրանք նորից պետք է զվարճացնեն երեխաներին իրենց խողով: Տնօրենը շատ է խնդրում, որ մենք շտապ օգնենք և երկու նոր տիկնիկ պատրաստենք՝ օգտվելով տուփի մեջ գտնվող երկրաչափական պատկերներից: Նա ուղղարկել է նաև տիկնիկների նկարները, որ դուք աշխատելիս օգտվեք դրանցից:

Այնուհետև դաստիարակը ցույց է տալիս նակրները և ասում.

-Ա՛յ, ա՛յ, ա՛յ, տե՛ս, տե՛ս, տե՛ս,

Երկու տիկնիկ ժպտերես.

Մեկդ կասի՝ շատ նման են մեկմեկու,

Իսկ մյուսները՝ նման չեն, չէ,

Այլ տարբեր են իրարից...

Ապա նայե՛ք ուշադիր.

Սա Անին է, սա Մարին,

Իսկ թե ինչով են նման

Ու թե ինչով են տարբեր,

Կգուշակե՛ք, ես գիտեմ:

Համեմատելով նակրները՝ երեխաները թվարկում են, թե տիկնիկները ինչ երկրաչափական պատկերներից են կազմված, ինչով են նման և ինչով տարբեր:

Այնուհետև տուփից հանելով անհրաժեշտ երկրաչափական պատկերները՝ հատակին հավաքում են երկուսին էլ: Հավաքած և պատրաստած տիկնիկները ասում են.

- Ապրե՛ք, ապրե՛ք, բալիկնե՛ր,

Ուշիմ, խելո՛ք փոքրիկներ,

Վաղը կգաք դուք մեզ հյուր՝

Ներկայացում դիտելու:

### Դաստիարակ

-Եկե՛ք մենք էլ, երեխանե՛ր, նոր հետաքրքիր նկարներ պատրաստենք տիկնիկային ներկայացման համար և տիկնիկների հետ միասին ուղարկենք տնօրենին, գուցե դրանք ներկայացման ժամանակ պետք կգան:

Հիմա փորձենք կառուցել պատկերներով ձեզ ծանոթ

Տարբեր – տարբեր նկարներ.

Դա թիթեռնիկ թող լինի, և մի ճուտիկ խատուտիկ

Կամ էլ փոքրիկ ծաղկաման՝ պատկերներով բազմազան:

Երեխաները տեղում փորձում են նոր պատկերներ ստանալ՝ ըստ առաջադրված նմուշների:<sup>8</sup>

## 2. Խաղ - <<Կառուցի՛ր ճանապարհներ>>

Նպատակը - Չարգացնել երեխաների հիշողությունը և երևակայությունը:

Խնդիրները - Ամրապնդել աճող և նվազող կարգով դասավորելու հմտությունը:

Անհրաժեշտ պարագաներ - Տարբեր մեծության 4-5 երկրաչափական պատկերներ, կարմիր և դեղին գոլակներ: Նապաստակ և սկյուռիկ խորհրդանշող գլխարկներ, տնակ:

---

<sup>8</sup> Ն. Հարությունյան, Խաղալով սովորենք մաթեմատիկա, Երևան, 2003, էջ 49-50:

Բովանդակությունը – Տարբեր չափի քառակուսիների և շրջանների միջոցով հաստակի վրա ցույց է տալիս տնակ տանող ճանապարհը: Խտաղին մասնակցող երեք երեխաները ձեռքերին ունեն ճանապարհը մախցնող տարբեր գույնի գուլակներ: Գալիս է նապաստակը:

-Երեխանե՛ր, դուք չգիտե՞ք դեպի բացատ տանող ճանապարհը, այնտեղ հարմար մի տնակ կա, ես ուզում եմ ապրել այնտեղ:

Երեխաներից մեկը կարմիր գուլակի օգնությամբ միացնում է շրջանակը և ցույց տալիս ճանապարհը: Նապաստակը հասնում է տնակին, ուրախ-ուրախ թռչկոտում է տան շուրջը:

#### Դաստիարակ

- Կանաչ դաշտում կար խրճիթ,

Այն շատ լան էր, սիրունիկ

Նապաստակը եկավ հեռվից

Ու զարմացան այդ տաք տեսքից:

Ու որոշեց այդտեղ ապրել:

Դուք կհարցնեք ինչպե՞ս գտավ ճանապարհը այստեղ բերող.

Դրա համար նապաստակը քայլեց. մեծ շրջանը փոքին կապող գուլակների ճանապարհով:

Հտոտ հայտնվում է սկյուռիկը, և փոքրից մեծ քառակուսիների ճանապարհը նույն ձևով միացնելով երեխաները նրան հասցնում են տնակի մոտ: Նա մոտենում է, ծեծում դռնակը և ասում.

- Թա՛կ-թա՛կ, թա՛կ-թա՛կ, այդ ես եմ,

Քո եղբայրն եմ, ընկերն եմ, արի՛ ապրենք երկուսով:

Դու հարցնում ես՝ ինչպե՞ս գտա ճանապարհը այստեղ բերող

Դրա համար ես քայլեցի փոքր ու մեծ քառակուսին

Իրար կապող գուլակների ճանապարհով:

#### Նապաստակ

-Պատասխանի՛ր հարցերիս, և դռնակը կբացեմ.

-Տարվա ինչպիսի՞ եղանակ գիտես:

-Սարին քանի՞ ամիս ունի:

-Տարի ո՞ր ամսով է սկսվում:

-Զանի՞ օր ունի ամիսը:

- Դու իմ տուն եկար բարով  
Արի՛ ապրենք երկուսով:

Յուրաքանչյուր առաջադրանքի ժամանակ երեխաներին մասնակից դարձնել, նրանց ուղղված հարցերի օգնությամբ, նպաստել, որ պատասխանների ժամանակ օգտվեն մեծ, փոքր, մեծից փոքր, փոքրը, մեծ, ավելի մեծ, փոքրից մեծ արտահայտություններից:<sup>9</sup>

### **Պարզ խնդիրների ուսուցումը, կռահման խնդիրները՝ մտավոր զարգացման միջոց**

Մաթեմատիկայի պարապմունքներին երեխաներին առաջադրվում են մեկից ոչ ավել գործողությամբ լուծվող խնդիրներ, որոնք ընդունված են անվանել պարզ խնդիրներ: Երեխաներին խնդրի կառուցվածքին ծանոթանալու համար հարմար է օգտագործել թատերականացումը: Սկսելով այդ աշխատանքները, կարելի է թատերականացված խմբերի միջոցով երեխաներին գործնականորեն ցույց տալ, որ առարկաների երկու խմբերի միացման ճանապարհով կարելի է ստանալ ավելի մեծ թիվ և հակառակը՝ առարկաներից մի խումբ առանձնացնելով կարելի է ստանալ փոքր թիվ: Միաժամանակ պետք է լուծել և՛ ավելացման, և՛ պակասեցման վերաբերյալ խնդիրներ: Ուսումնական տարվա վերջին ամիսներին կարելի է առաջարկել նաև ինքնուրույն կազմել խնդիրներ:

1. Տրված որոշակի քանակի առարկաներով (3 կարմիր խորանարդ և 1 կապույտ խորանարդ):
2. Տրված նկարով (ծաղկաման՝ մեջը 2 կարմիր և 1 սպիտակ մեխակ):
3. Տրված թվի սահմանում (օրինակ 5-ի սահմանումը):

Ուսումնական տարվա երկրորդ կեսին կարելի է առաջարկել ոչ ստանդարտ տիպի խնդիրներ: Երեխաները լավ յուրացրած նյութի նկատմամբ անտարբեր են, նրանց ձանձրացնում են շարունակ երկու բազմությունների միացնելու կամ անջատելու ճանապարհով կազմված պարզ խնդիրների լուծումը: Օրինակ՝

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 50-51



1. Սեղանին դրված են 4 փոքր և 1 մեծ խորանարդ: Ընդամենը քանի՞ խորանարդ կա սեղանին:

2. Վարդի թփին բացվել էր 6 վարդ, երկուսը քաղեցին: Քանի՞ վարդ մնաց թփի վրա:

Նման խնդիրները առանց մտքի ջանք գործադրելու, անմիջապես լուծում են: Իսկ կռահման խնդրի լուծման ուղղվածությունը մտածողությանը տալիս է պրոբլեմային, այսինքն՝ որոնողական բնույթ, որը մտածողության պրոցեսի անեմալեական հասկանիչն է: Մտածողությունը ծագում է պրոբլեմի, խնդրի, հարցի դեպքում՝ որպես շարժում անհայտից դեպի հայտնին, անհասկանալիից՝ հասկանալին: Օրինակ՝

1. Երկու խոզ ունեն հավասար թվով խանկորներ: Դրանցից մեկն ուներ 6 խոճկոր: Քանի՞ խոճկոր ունի մյուսը:

2. Լուսինեն ունի 5 տետր, իսկ Զրիստինեն՝ նույնքան: Քանի՞ տետր ունի Զրիստինեն:

3. Տերևների արանքից երևում են թռչունների տոտիկները: Քանի՞ թռչուն է նստած ճյուղին, եթե տոտիկները չորսն են:

4. Տատիկը թռռնիկների համար գործել է 6 ձեռնոց: Քանի՞ թռռ ունի տատիկը:

5. Դարպասի տակից երևում է կատվի չորս ոտք: Քանի՞ կատու կա այնտեղ:

6. Կարենն ունի 2 փուչիկ, իսկ Կարինեն՝ նույնքան: Քանի՞ փուչիկ ունի Կարինեն:

7. Տատիկը ձմեռվա համար գործել է 8 զուլպա: Քանի՞ թռռնիկ ունի տատիկը:

8. Ինչպե՞ս կարելի է 5 ձողիկով կառուցել 2 եռանկյուն:

9. Ինչպե՞ս կարելի է 7 ձողիկով կառուցել երկու քառակուսի:

### **Մանկական գրականությունը և տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը**

Երեխաները շատ են սիրում, երբ մեծերը իրենց համար կարդում են: Նրանք նույն ստեղծագործությունը կարող են մի քանի անգամ լսել: Այդ ստեղծագործությունները ոչ միայն դաստիարակչակալ նշանակություն ունեն, այլև դրանք կարող են նպաստել նաև նրանց մաթեմատիկական գիտելիքների ամրապնդմանը: Ինչես ցույց են տվել դիտողները, յիթմն ու հանգավորումը հնարավորություն են տալիս ճիշտ ընկալել ստեղծագործության բովանդակությունը: Շատ հետաքրքիր են ուսանավորների ձևով գրված թվաբանական պարզ խնդիրները:

Մանկական գրականության մեջ շատ կան այնպիսի բանաստեղծներ, որոնց ստեղծագործությունները կարելի է օգտագործել վերը նշված նպատակի համար: Օրինակ՝

*Եթե կանգնեմ ես հինգ թվի*

*Ու մեկի ճիշտ մեջտեղում,*

*Այս հինգը կնվազի ճիշտ մեկով:*

*Կքչանա ու կդառնա չորս թվի չափ:*

*Ահա այսպես՝ 5-1=4.*

Մ. Առաքելյան<sup>10</sup>

### **Պարապմունքի պլանավորումը և հաշվառումը**

Մաթեմատիկայի խնդիրները չեն կարող լուծվել առանց ճիշտ պլանավորման և հաշվառման: Պլանավորումը հնարավորություն է տալիս նպատակաուղղված և սխտեմատիկ բաշխել ծրագրային նյութը ուսումնական ժամանակի վրա՝ հաշվի առնելով խմբի և երեխաների անհատական մակարդակը, հիմքում ունենալով ծրագրի հայեցակարգը: Պլանը գրելուց առաջ դաստիարակը պետք է ծանոթ լինի՝

1. Տարրական մաթեմատիկայի ամբողջ ծրագրի և տվյալ տարիքի խմբի ծրագրին.
2. Իր խմբի երեխաների տարիքային և անհատականառանձնահատկություններին:
3. Ուսուցման ժամանակ կիրառվող հնարներին:
4. Դիդակտիկ նյութերի պատրաստման եղանակներին:
5. Մշտապես բարձրացնի իր մասնագիտական որակավորումը, իմանա ժամանակակից մանկավարժական գիտության նվաճումները, պրակտիկ աշխատանքի նորությունները և, վերջապես, ընթերցի մանկավարժական մամուլում լույս տեսնող հոդվածները:

Հաշվառումը դաստիարակի կողմից կոնկրետ աշխատանքի արդյունքի բազմակողմանի խոր վերլուծությունն է, մասնավորապես՝ մաթեմատիկայի տվյալ օրվա պարապմունքի վերլուծությունը: Դա հնարավորություն է տալիս գնահատել ուսուցման ընթացքում

---

<sup>10</sup> Տես՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, էջ 127:

օգտագործած մեթոդները, դիդակտիկ, զարգացնող խաղերի, դիտողական պարագաների արդյունավետությունը և հետագա աշխատանքների պլանավորումը:<sup>11</sup>

Այսպիսով՝ վերը նշված կետերից յուրաքանչյուրն իր ուրույն տեղն է զբաղեցնում երեխայի մոտ տարրական մաթեմատիկական գիտելիքների զարգացման գործում և ունի առանձնահատուկ նշանակություն: Մաթեմատիկական գիտելիքների զարգացման գործընթացում նշված կետերից ամեն մեկին պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որովհետև միայն այդ կերպ կարող ենք հասնել մեր առջև դրված նպատակին և ունենալ արդյունավետ աշխատանք, քանի որ սրանք փոխկապակցված են իրար, և կետերից որևէ մեկի անտեսման կամ բացթողման պարագայում աշխատանքը թերի կլինի ու չի ունենա մեր նպատակադրած արդյունքը:

---

<sup>11</sup> Տես՝ Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, էջ 91:

**ՊԼՈՒԽ 2. ՊԱՐԱՊՄՈՒՆՔ**  
**<< ԾԱՆՈԹԱՑՈՒՄ 3 ԹՎԻՆ և ԹՎԱՆՇԱՆԻՆ >>**

**Պարապմունքի պլան**

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը	4-5 միջին խումբ	<<Ծանոթացում 3 թվին և թվանշանին>>	1 պարապմունք 20-25 ր
Նպատակը	<ul style="list-style-type: none"> <li>• Ամրապնդել մեծության և տարածական հմտությունները, երկրաչափական պատկերները՝ շրջանը, քառակուսին և եռանկյունն անվանելու և տարբերակելու կարողությունները:</li> <li>• Ձևավորել պատկերացումներ 3 թվի և թվանշանի մասին:</li> <li>• Ծանոթացնել 1-3 թվերի թվարկման ճիշտ հերթականությանը:</li> <li>• Սովորեցնել տարբերել 1 և 2, 2 և 3 առարկաներից բաղկացած խմբեր (համեմատման և հաշվողական եղանակով):</li> </ul>		
Խնդիրները	<ul style="list-style-type: none"> <li>• Ճշտել օրվա հատվածների մասին ունեցած պատկերացումները:</li> <li>• Բացահայտել թվերի միջև գոյություն ունեցող քանակական հարաբերությունները (2-ը շատ է, քան 1-ը, 2-ը քիչ է, քան 3-ը):</li> <li>• Չարգացնել 1-3 թվերի հաջորդականությունը հասկանալու և հաշվելու, ինչպես նաև 1-ից 3-ի սահմանում պարզ խնդիրներ լուծելու կարողությունները:</li> </ul>		
Նյութերը	1-3 թվանշանները պատկերող քարտեր, օրվա 4 մասերը բնութագրող նկարներ և քարտեր, խաղալիք նապաստակներ, աքլոր,		

	հավ, ճուտիկներ, փուչիկներ, տնակ, քառակուսի, եռանկյուն, շրջան՝ երեխաների քանակով:
Մեթոդները	Հարցադրումներ, դիդակտիկ խաղեր, խմբային աշխատանքներ, պարզ խնդիրներ:
<b>ԸՆԹԱՑՔԸ</b>	
Առավոտյան հանդիպում	Ողջունել երեխաներին, մի փոքր խոսել օրվա մասին՝ օգտագործելով դաստիարակի հորինած հանելուկներից, երեզել տվյալ օրվա պարապմունքի թեմայով հորինված երգեր:
Խթանման փուլ	<ul style="list-style-type: none"> <li>• Երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու նպատակով՝ պատմել փոքրիկ պատմություն՝ օգտագործելով համապատասխան նյութ (տվյալ պարագայում՝ խաղալիք արջ):</li> <li>• Արջի բերած պարկից հանել խաղալիքները և համեմատել, պատասխաններ դաստիարակի հարցերին. Օրինքլ՝ <ul style="list-style-type: none"> <li>- Երեխանե՛ր, իմ ձեռքին ի՞նչ խաղալիք կա:</li> <li>- Ո՞ր ձեռքում է գտնվում:</li> <li>- Ո՞ր ձեռքում է գտնվում նապաստակը:</li> <li>- Նապաստա՞կն է մեծ, թե փոքրը:</li> <li>- Ի՞նչ կա իմ ձեռքին, ո՞րն է երկար, որը կարճ:</li> </ul> </li> <li>• Անցնել 3-ի ուսուցմանը:</li> </ul>
Իմաստի ընկալման փուլ	<ul style="list-style-type: none"> <li>• 3-ի ուսուցմանն անցնելուց առաջ, նախ անդրադարձ կատարել 1 և 2 թվերին ու թվանշաններին՝ հաշվելով տարբեր առարկաներ, ինչպես նաև նշել՝ թե որ թիվը որին է հաջորդում կամ նախորդում, այնուհետև անցում կատարել 3-ի ուսուցմանը:</li> <li>• &lt;&lt;Երեք խոզուկներ&gt;&gt; հեքիաթի հերոսների միջոցով ներկայացնել 3 թիվը:</li> <li>• Պարապմունքի ընթացքում տրվում են հետևյալ հարցերը. <ul style="list-style-type: none"> <li>- Ինչքա՞ն խոզուկ եղավ:</li> <li>- Եթե 2-ին ավելացնենք 1, ի՞նչ կստացվի:</li> <li>- Գո՛՛ռ, քանի՞ նապաստակ ես բռնել:</li> </ul> </li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>- Հայկ, իսկ դո՞ւ:</li> <li>- Հավ մայրիկը քանի՞ ճուտիկ ունի:</li> <li>- Երեխանե՛ր, այս գույները ձեզ ի՞նչ են հուշում:</li> <li>- ՀՀ-ի դրոշը քանի՞ գույն ունի:</li> <li>- Ինչպե՛ս է կոչվում այն:</li> <li>• Պարապմունքի ժամանակ խաղում են հետևյալ խաղերը.          &lt;&lt;Չարանճի նապաստակները&gt;&gt;, &lt;&lt;Աքլորի ընտանիքը&gt;&gt;,          &lt;&lt;Եղբայր խոզուկները&gt;&gt;, &lt;&lt;Գույնզգույն փուչիկներ&gt;&gt;:</li> <li>• Ցույց տալ 3 թվանշանը՝ արտասանելով &lt;&lt;Երեքն էլ մի օղ          է...&gt;&gt; քառատողը:</li> </ul>
Ֆիզկուլտ դադար	Երեխաները 3 ծափ են զարկում գլխի վերևում, առջում և ներքևում, ծափիկները արագացնում են և դրաձնում անձրևի կաթիլներ:
Կշռադաստման փուլ	<ul style="list-style-type: none"> <li>• Դաստիարակը հարցերի միջոցով ստուգում է, թե որքանով են երեխաները ուշադիր եղել պարապմունքի ընթացքում:             <ul style="list-style-type: none"> <li>- Երեխանե՛ր, ո՞ր թվին ծանոթացանք այսօր:</li> <li>- Ո՞ր կենդանին էր մեզ հյուր եկել, և ի՞նչեր էր բերել մեզ համար:</li> <li>- Զանի՞ նապաստակ կար բնության անկյունում:</li> <li>- Զանի՞սն էին այսօրվա մեր հեքիաթի եղբայր խոզուկները:</li> </ul> </li> <li>• 1-2 պարզ խնդիրների միջոցով ստուգում է, թե որքանով են երեխաները յուրացրել նոր ուսուցանված նյութը:</li> </ul>

**Աշխատանք խմբերով** – Դաստիարակը խումբը բաժանում է 4 ենթախմբերի, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված է նոր նյութի վերաբերյալ որևէ աշխատանք (աշխատանքային կենտրոնն ընտրում են երեխաները):

## Պարապմունքի ընթացքը՝ ըստ վերը նշված պլանի

### Խթանման փուլ

Դաստիարակ – Աշնանային մի գեղեցիկ առավոտ արևն արթնացավ և ասաց աստղերին.  
<<Դե՛, իմ սիրելի՛ բարեկամներ, դուք շատ եք հոգնել, գնացեք քնեք, հանգստացեք, գիշերը եկեք:  
Իսկ ես կլուսավորեմ, կգեղեցկացնեմ, կչերմացնեմ մեր Գորիս քաղաքը>>:

Երեխանե՛ր, հիմա ես ձեզ մի հանելուկ կառաջարկեմ, ուշադիր ինձ լսե՛ք, որ կարողանաք  
ճիշտ գտնել հանելուկի պատասխանը:

*Այն ո՞ր պահն է տվյալ օրվան,  
Երբ արթնանում, լվացվում ենք,  
Մարզանք անում, հագնվում ենք,  
Մանկապարտեզ հանախում ենք:*

### Երեխաները պատասխանում են – Առավոտյան

Դաստիարակ – Ճի՛շտ է, երեխանե՛ր, դա լինում է առավոտյան:

Երեխանե՛ր, հենց այսօր՝ աշնանային այս գեղեցիկ օրը մենք էլ արթնացանք քնից,  
լվացվեցինք, հագնվեցինք և եկանք մանկապարտեզ, կատարեցինք առավոտյան  
մարմնամարզությունը:

Այժմ կսկսենք մեր պարապմունքը:

Երեխանե՛ր, նայելով ձեր սեղաններին՝ կարո՞ղ եք ասել, թե այսօր ինչպիսի պարապմունք է  
լինելու մեզ մոտ:

Երեխա – Մաթեմատիկայի պարապմունք:

Դաստիարակ – Ճի՛շտ է, երեխանե՛ր, այսօր մեզ մոտ մաթեմատիկայի պարապմունք է:  
Մենք պետք է ծանոթանանք...

Վա՛ն՛ա՛յ, երեխանե՛ր, քիչ մնաց մոռանայի՛ երբ ես քայլում էի մանկապարտեզի միջանցքով,  
հանդիպեցի ծուռթաթ արջին: Նա տխուր կանգնած էր: Մոտեցա նրան և հարցրի, թե ինչո՞ւ է  
կանգնել միջանցքում: Նա ասաց, որ ինքը անտառից է եկել և չգիտի, թե որտեղ գնա: Ես նրան  
հրավիրեցի մեր խումբ: Ահա՛, նա այստեղ է (դաստիարակը ցույց է տալիս խաղալիք արջին,  
վերցնում այն և խոսում նրա անունից):

Արջ – Բարև ձեզ, իմ փոքրիկ բարեկամներ, ես եկել եմ անտառից, ինձ Մաշենկան է ուղարկել: Նա այս պարկը ուղարկել է ձեզ, բայց չգիտեմ՝ ինչ կա պարկում, որովհետև նա չի թույլատրել բացել պարկի բերանը: Դե, ես էլ չբացեցի: Բայց գիտե՞ք երեխանե՛ր, ես շատ տխուր եմ, որովհետև մոռացել եմ անտառի ճանապարհը:

Դաստիարակ- Մի՛ տխրիր, սիրելի՛ արջուկ, նստի՛ր միքիչ հանգստացի՛ր, հետո մենք քեզ ցույց կտանք անտառի ճանապարհը:

Դե՛, երեխանե՛ր, բացենք պարկի բերանը և տեսնենք՝ ի՞նչ է ուղարկել մեզ Մաշենկան:

Երեխաները հերթով հանում են խաղալիքները և դասավորում սեղանին:

Դաստիարակ – Երեխանե՛ր, կարծես Մաշենկան գիտեր, որ այսօր մեզ մոտ մաթեմատիկայի պարապմունք է: Եկե՛ք այս խաղալիքները համեմատենք (դաստիարակը կատարում է հարցադրումներ, երեխաները պատասխանում են):

1. Դ. – Երեխանե՛ր, իմ ձեռքին ի՞նչ խաղալիքներ կան:

Ե. – Ձեր ձեռքին կան արագադղ և նապաստակ:

2. Դ. – Ո՞ր ձեռքում է գտնվում արագադղը:

Ե. – Արագադղը գտնվում է աջ ձեռքում:

3. Դ. – Ո՞ր ձեռքում է գտնվում նապաստակը:

Ե. – Նապաստակը գտնվում է ձախ ձեռքում:

Դաստիարակ- Հիմա փակե՛ք ձեր աչքերը: <<Գիշե՛ր>> (երեխաները փակում են աչքերը, իսկ դաստիարակն այդ ընթացքում վերցնում է տարբեր գույնի և չափի մատիտներ): <<Ցերե՛կ>>:

4. Դ.- Ինչե՛ր կան իմ ձեռքին: Ո՞րն է երկար, որը կարճ:

1 Ե. – Ձեր ձեռքին կան կարմիր և կապույտ մատիտներ:

2 Ե. – Կարմիր մատիտը կարճ է կապույտ մատիտից:

3 Ե. – Կապույտ մատիտը երկար է կարմիր մատիտից:

Դաստիարակ – Երեխանե՛ր, մեր արջուկը շատ է տխրել, եկե՛ք նրան օգնենք՝ ցույց տալով նրան անտառի ճանապարհը:

## Երգ

*Դու մի՛ տխրիր, արջո՛ւկ սպեր,*

*Դու մեզ հետս ես, սպահով,*

*Մենք միասին քեզ հետ հիմա*



*Մաշենկային կտեսնենք:*

*Չո՛ւ, չո՛ւ, շոգեքա՛րշ,  
Դու մեզ տա՛ր անտառ  
Տու, տու անեղով՝  
Դու մեզ տար անտառ:*

*Չո՛ւ, չո՛ւ, շոգեքա՛րշ,  
Թեքվի՛ր դեպի աջ,  
Տու, տու անեղով՝  
Թեքվի՛ր դեպի ձախ:*

*Չո՛ւ, չո՛ւ, շոգեքա՛րշ,  
Գնա՛ թունեղով,  
Տու, տու անեղով՝  
Գնա՛ թունեղով:*

(Այս ընթացքում արջուկը գտնում է անտառ տանող ճանապարհը և գնում):

### **Իմաստի ընկալման փուլ**

Դաստիարակ – Արջը գտավ իր ճանապարհը և գնաց Մաշենկայի մոտ, իսկ մենք շարունակում ենք մեր պարապմունքը:

Երեխաներ մաթեմատիկական երկրում ովքե՞ր են ապրում:

Երեխա – Մաթեմատիկական երկրում ապրում են թվերն ու երկրաչափական պատկերները:

Դաստիարակ – Յո՛ւյց տվեք, խնդրեմ, քառակուսին և ասացե՛ք, թե ինչու է քառակուսի կոչվում:

Երեխա – Որովհետև ունի 4 հավասար կողմ:

Դաստիարակ – Յո՛ւյց տվեք, խնդրեմ, շրջանը և ասացե՛ք, թե ինչո՞ւ է կոչվում շրջան:

Երեխա – Որովհետև չունի ոչ մի կողմ, այն կլոր է:

Դ. - Յո՛ւյ տվեք, խնդրեմ, եռանկյունը և ասացե՛ք, թե ինչո՞ւ է կոչվում եռանկյուն:

Ե. – Որովհետև ունի երեք կողմ:

Գ. – Երեխաներ, ձեր սեղանների վրա երկրաչափական պատկերներից բացի կան նաև թվեր:

Ասացե՛ք, ինդրեմ, ո՞րն է թվերի առաջնորդը:

Ե. – Թվերի առաջնորդը մեկն է:

Գ. – 1-ն ինչի՞ է նման:

Ե. – *Մեկը նման է այունի,  
Ծիծաղելի տեսք ունի,  
Կանգնած է ցից, իսկ գլխին՝  
Եռանկյունի իր կեպին:*

Գ. – Երեխաներ, թվե՛ք այնպիսի օրինակներ, որոնցից կա մեկ հատ:

Ե. – Արևը մեկն է:

Ե. – Լուսինը մեկն է:

Ե. – Մայրիկը մեկն է:

Ե. – Հայրիկը մեկն է:

Ե. – Մեր խմբասենյակի ինքնաթիռը մեկն է, օդապարիկը մեկն է:

Գ. – Իսկ ո՞րն է 1-ի հաջորդ թիվը:

Ե. – 1-ի հաջորդ թիվը 2-ն է:

Գ. – Ցույց տվե՛ք երկու թվանշանը և ասացե՛ք՝ ինչի՞ է նման երկուսը:

Ե. – *Երկուսը ոտքը ծալել,  
Գլուխը առաջ է թեքել,  
Նազանքով վիզն է ճոճում,  
Ինչպես կարասյր՝ լճում:*

Գ. – Նայելով մեր խմբասենյակին՝ ասացե՛ք օրինակներ, որոնցից լինեն երկուսը:

Ե. – Թզուկները երկուսն են:

Ե. – Նապաստակները երկուսն են:

Գ. – Երեխաներ, 2-ի նախորդ թիվը ո՞րն է:

Ե. – Երկուսի նախորդ թիվը 1-ն է:

Գ. – Երեխաներ, մե՞կն է շատ, թե երկուսը:

Ե. – Երկուսը շատ է մեկից:

Գ. – Երեխաներ, հիմա ես կբացեմ վարագույրը և կտեսնենք, թե որ հեքիաթի հերոսներն են մեզ հյուր եկել (քանի որ խոսքի զարգացման պարապմունքի ժամանակ ծանոթացել ու սովորել

էինք <<Երեք խոզուկները>> հեքիաթը, պարապմունքների միջև կապն ապահովելու նպատակով ընտրեցի տվյալ հեքիաթի հերոսների միջոցով էլ իրականացմել 3 թվի ուսուցումը):

Երեխաներ (միաբերան) – Մեզ հյուր են եկել երեք խոզուկները:

Գ. – Եկե՛ք հաշվենք խոզուկներին՝ 1, 2 ...

Վա՛սյ, երեխանե՛ր, խոզուկներից մեկը չկա: Եկե՛ք փնտրենք և կանչենք նրան: Նա երևի գնացել է կադին փնտրելու և մոլորվել է անտառում (երգելով կանչում ենք խոզուկին):

## Երգ

*Ո՞ր ես կորեղ, ա՛յ խռան,  
Ո՞րտեղ փախար, ա՛յ խռան,  
Կադին փնտրել շատ ես սիրում,  
Արի՛ տանենք մենք քեզ տուն:*

Երեխաներից մեկը բացականչում է. – Ես գտա՛, ես գտա՛:

(Երգը շարունակելով՝ խոզուկին տանում են եղբայրների մոտ):

Գ. – Հիմա եկե՛ք կրկին հաշվենք խոզուկներին, տեսնենք քանի՞ խոզուկ եղան:

Ե. – Նուֆ-նուֆ, Նաֆ-նաֆ և Նիֆ-նիֆ:

Գ. – Ինչքա՞ն խոզուկ եղավ:

Ե. – Եղավ երեք խոզուկ:

Գ. – Ուրեմն, երեխանե՛ր, եթե 2-ին ավելացնենք 1, ի՞նչ կստանանք...

Կստանանք 3:

(Այսքանից հետո սկսում ենք խաղալ պլանում նշված խաղերը, որոնք երեխաների կարողությունների և պատկերացումների զարգացման հարցում երկրորդ տեղն են կազմում՝ իրենց կարևորությամբ և արդյունավետությամբ, առաջին տեղում պարապմունքն է):

## 1. <<Չարաճճի նապաստակները>>

Գ. – Երեխանե՛ր, մեր բնության անկյունը, չգիտես ինչու, խառնաշփոթ վիճակում է հայտնել: Այս ո՞վ է այսպես արել (բնության անկյունը թափթփված է, տարբեր տեղերում դրված են 3 նապաստակներ):

Վա՛նա՛յ, երեխանե՛ր, այստեղ չարաճճի նապաստակներեն են վազվզում: Ո՛վ կարող է ինձ օգնել՝ բռնել նրանց:

Երեխաները քաղականչում են. – Ե՛ս, ե՛ս...

Բ. – Գո՛ռ, քանի՞ նապաստակ ես բռնել:

Գոռ – Ես բռնել եմ 2 նապաստակ:

Բ. – Հայկ, իսկ դու քանի՞ նապաստակ ես բռնել:

Հայկ – Ես բռնել եմ 1 նապաստակ:

Բ. – Երեխանե՛ր, ինչպես տեսանք, թեթ երկու նապաստակին ավելացնենք ևս մեկ նապաստակ, կունենանք 3 նապաստակ:

## 2. <<Աքլորի ընտանիքը>>

Բ. – Վաղ առավոտյան արևը բարձրացավ հավաբնի կտուր և կանչեց ծուղրուղո՛ւղո՛ւղ, ծուղրուղո՛ւղ. (դաստիարակը վերցնում է խաղալիք արևը և խոսում նրա անունից)

Աքլոր. – Դո՛ւրս եկեք, դո՛ւրս, այ՛ քնկոտներ:

Բ. – Բնից դուրս եկավ հավ մայրիկը, տեսնելով աշնանային պայծառ, տաք եղանակը, կուկո անելով՝ կանչեց իր ճուտիկներին: Առաջինը դուրս եկավ սպիտակ ճուտիկը, երկրորդը՝ դեղին ճուտիկը, իսկ վերջում՝ շատ նիհար, փոքրիկ ճուտիկը (դաստիարակը նկարագրելու ընթացքում հավաբնի նման փոքրիկ տնակից հերթականությամբ հանում է հավ մայրիկին և ճուտիկներին):

Երեխանե՛ր, տեսե՛ք, սպիտակ ճուտիկին ավելացնում ենք դեղին ճուտիկը և ունենում 2 ճուտիկ: Եթե այս երկու ճուտիկներին ավելացնենք ևս մեկը՝ նիհար ճուտիկը, քանի՞ ճուտիկ կունենանք:

Դանիել. – Կունենանք 3 ճուտիկ:

Բ. – Ուրեմն քանի՞ ճուտիկ ունի հավ մայրիկը:

Անի. – Հավ մայրիկը ունի երեք ճուտիկ:

Բ. – Ճի՛շտ է, հավ մայրիկն ունի 3 ճուտիկ:

## 3. <<Գույնզգույն փուչիկներ>>

Այս խաղի իրականացման համար, դաստիարակը նախօրոք պատրաստել է 3 թվանշանի տեսքով փուչիկ և մի քանի այլ փուչիկներ՝ տարբեր գույների ու դրանք թաքցրել ննջասենյակում: Խաղի սկզբում միացվում է երաժշտություն, և դաստիարակը խաղասենյակ է բերում 3 թվանշանի

տեսքով փուչիկը, ինչպես նաև գույնզգույն փուչիկների փունջը: Երաժշտությունը դադարեցվում է: Դաստիարակը, փուչիկների փունջը ձեռքում պահած, ասում է.

Երեխաներ, հիմա ես կասեմ փուչիկների գույներ, իսկ դուք կմոտենաք և կպայթեցնեք տվյալ գույնի փուչիկը (դաստիարակը անվանում է գույները, իսկ երեխաները մոտենում են և պայթեցնում տվյալ փուչիկը. Մարկը պայթեցրեց կանաչ փուչիկը, Ռուբենը՝ վարդագույնը, Եվան՝ դեղինը, Լիկան՝ սևը, Էլենը՝ մանուշակագույնը):

Դաստիարակն այնպես է անվանում գույները, որ վերջում մնան կարմիր, կապույտ և ծիրանագույն փուչիկները:

Գ. – Հիմա եկե՛ք անվանենք մնացած փուչիկների գույները:

Երեխաներ (խմբակային) – Կարմիր, կապույտ, նարնջագույն:

Գ. – Երեխաներ, այս գույները ձեզ ի՞նչ են հիշեցնում:

Դավիթ. – Այս գույները մեզ հիշեցնում են Հայաստանի Հանրապետության դրոշը:

Գ. – Այսինքն՝ քանի՞ գույն ունի Հայաստանի Հանրապետության դրոշը:

Վահրամ. – Հայաստանի Հանրապետության դրոշի գույները երեքն են:

Գ. – Մեկ այլ բառով ինչպե՞ս ենք անվանում մեր դրոշը:

Արիանա. – Մեր դրոշն անվանում ենք նաև եռագույն:

Վերջում դաստիարակը ցույց է տալիս 3-ի տեսքով փուչիկը և ասում.

-Ահա՛, սիրելիներս, թվանշանների հետաքրքիր ընտանիքի անդամներից մեկը՝ պարոն երեքը, թվաշարքի 3-րդ թվանշանը (այս ասելով՝ դաստիարակը սեղանից վերցնում է 3 թվանշանով քատր և ավելացնում պատից կախված թվանշանների շարքին՝ ևս մեկ անգամ հիշեցնելով, որ 1-ի հաջորդ թիվը 2-ն է, 2-ի հաջորդը՝ 3-ը):

Գ. – *Երեքն էլ մի օղ է,*

*Բայց տե՛ս, ոնց են տրոցել,*

*Երկու կեսերն էլ սհա*

*Դրել են իրար վրա:*

Պարապմունքի ժամանակ դաստիարակը հետևում է, որ բոլոր երեխաներն ընդգրկված լինեն պրոցեսին, ակտիվ մասնակցություն ցուցաբերեք և պատասխանեն հարցերին, որպեսզի չձանձրանան և չհոգնեն: Այդ նույն նպատակով պարապմունքի ընթացքում կատարվում է նաև ֆիզկուլտ դադար, որպեսզի երեխաները թարմանան և կենտրոնանան: Այն իրականացվում է տարբեր վարժությունների օգնությամբ:

**Ֆիզկուլտ դադար.** – *Եկե՛ք ծափ տանք գլխից վերև՝ 1, 2, 3,  
Երեք ծափ էլ առջևում՝ 1, 2, 3,  
Նույնքան ծափ էլ ներքևում՝ 1, 2, 3:  
Ծափիկները արագացնենք,  
Անձրևի կաթիլ դարձնենք:<sup>12</sup>*

### **Կշռադատման փուլ**

Դադարից հետո դաստիարակն անցնում է ընդհանուր պարապմունքի ամփոփմանը: Նյութն ամրապնդելու համար տալիս է հետևյալ հարցերը.

Բ. Երեխանե՛ր, ո՞ր թվին ծանոթացանք այսօր:

Մոնիկա – Այսօր մենք ծանոթացանք 3 թվին և թվանշանին:

Բ. Ո՞ր կենդանին էր մեզ հյուր եկել և ինչե՞ր էր բերել մեզ համար:

Տարոն. – Այսօր մեզ հյուր էր եկել ծուռթաթ արջը:

Արինա. – Արջը մեզ համար բերել էր Մաշենկայի ուղարկած խաղալիքները:

Բ. – Քանի՞ նապաստակ կար բնության անկյունում:

Լեռ. – Բնության անկյունում կար երեք նապաստակ:

Բ. – Քանի՞սն էին այսօրվա մեր հեքիաթի եղբայր խոզուկները:

Մարի. – Մեր այսօրվա հեքիաթի եղբայր խոզուկները երեքն էին՝ Նուֆ-նուֆը, Նաֆ-նաֆը և Նիֆ-նիֆը:

Հարցադրումներից հետո դաստիարակը մի քանի պարզ խնդիրներ է առաջադրում երեխաներին՝ ստուգելու, թե որքանով են նրանք յուրացրել նոր ուսուցանված նյութը:

**Խնդիր 1** – *Դու ինձ ցո՛ւյց տուր մեկ մատիտ,*

*Ես էլ քեզ՝ երկու մատիտ,*

*Եթե շարենք կողք կողքի,*

*Քանի՞ մատիտ կստացվի:*

Պատասխանում է Հարությունը- Կստացվի երեք մատիտ:

<sup>12</sup> Հ. Հարությունյայ, Մաթեմատիկայի պարապմունքները մանկապարտեզում, Զանգակ հրատ, Երևան, 2016, էջ 74:

**Խնդիր 2** – Գյուղում կար երեք ձի,

*Նրանցից երկուսը տարան մրցույթի:*

*Քանի՞ ձի մնաց գյուղում:*

Պատասխանում է Սոֆին – Գյուղում մնաց մեկ ձի:

**Խնդիր 3** – Կանաչ բացատում,

*Երկու նապաստակներ էին ցատկոտում,*

*Նրանց մեկն էլ միացավ,*

*Քանի՞ նապաստակ դարձավ:*

Պատասխանում է Վարուժը – Դարձավ երեք նապաստակ:

Դ.- Դե՛, սիրելի՛ երեխաներ, մենք մեր հաջորդ պարապմունքը կնվիրենք 3 թվի կազմությանը: Իսկ հիմա ընտրե՛ք ձեր ցանկացած աշխատանքային կենտրոնները և սկսե՛ք աշխատանքը:

**Աշխատանք արվեստի կենտրոններում**

<p>ԽՈՒՄԲ 1՝ կանաչ սեղան</p> <p>Աշխատում են բնական նյութերով – ճյուղեր, տերևներ, ծղոտ, փոքրիկ քարեր</p> <p>Օգտագործում են – սուսինձ, հաստ պաստառ և թաց անձեռոցիկներ</p> <p>Պատրաստում են – երեք եղբայր խոզուկների տնակները:</p>	<p>ԽՈՒՄԲ 2՝ կարմիր սեղան</p> <p>Աշխատում են – պլաստիլինով</p> <p>Օգտագործում են – ծեփատախտակ, կերտածող և թաց անձեռոցիկներ</p> <p>Ծեփում են – երեք թվանշանը, նապաստակներ և արջ:</p>
<p>ԽՈՒՄԲ 3՝ դեղին սեղան</p> <p>Աշխատում են – ջրաներկով, մատիտներով</p> <p>Օգտագործում են – թուղթ, ջրամաններ, վրձիններ, թաց անձեռոցիկներ</p> <p>Նկարում են – Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը և տարբեր գույների փուչիկներ:</p>	<p>ԽՈՒՄԲ 4՝ կապույտ սեղան</p> <p>Աշխատում են – գունավոր թղթերով</p> <p>Օգտագործում են - սուսինձ և թաց անձեռոցիկներ</p> <p>Փակցնում են – հավաքուն, արլոր, հավ և ճուտիկներ:</p>

Վերջում երեխաները խումբ-խումբ ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները:

## Տնօրենի և դաստիարակի դիտարկումները

### **Պարապմունքին՝ որպես դիտարկող, ներկա էին նաև հաստատության տնօրենը և մեկ դաստիարակ.**

Ներկայացնենք նրանց դիտարկումները

ՏՆՕՐԵՆ՝ Կ. Մինասյան

1. Դաստիարակը, միանշանակ, կարողացավ հասնել պարապմունքի նպատակներին, դիպուկ հարցերի և ճիշտ մոտեցման շնորհիվ կարողացավ ամրապնդել երեխաներին արդեն ծանոթ *մեծության և տարածական* հմտությունները, հետաքրքիր ու բովանդակալից խաղերի և մեփոդների միջոցով զարգացրեց երեխաների պատկերացումները 3 թվի ու թվանշանի, ինչպես նաև նախոր երկու թվերի ու թվանշանների վերաբերյալ:

Դաստիարակի կատարած աշխատանքներն ուղղված էին 1-3 թվերի հաջորդականությունը հասկանալու, ինչպես նաև 1-3-ը հաշվելու կարողությունների զարգացմանը:

2. Երեխաները շատ ակտիվ էին, մեկը մյուսին հերթ չտալով՝ պատասխանում էին դաստիարակի հարցերին, սիրով ու հետաքրքրությամբ լսում էին դաստիարակի պատմած պատմությունը և արտասանած քառատողերը: Հատկանշական է այն փաստը, որ նրանց մոտ հոգնածություն չէր նկատվում:

3. Ինչպես գիտենք, մաթեմատիկական մարդու ճիշտ զարգացմանը նպաստող կարևորագույն գործոններից մեկն է: Երեխայի մեջ մաթեմատիկական հմտություններ և պատկերացումներ պետք է սկսվեն զարդացվել վաղ տարիքից, անգամ, մինչև մանկապարտեզ հանախելը՝ ծնողի կողմից:

Մաթեմատիկական պատկերացումները երեխայի մեջ ձևավորում և զարգացնում են տրամաբանական և վերլուծական մտածողություն, ինչը շատ կարևոր է աշխարհը ճիշտ ընկալելու ու հետագայում կայանալու հարցում:

Տվյալ հոտագոտությունը միտված է նախադպրոցական հաստատությունում տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման գործընթացը ճիշտ կազմակերպելու, լավագույն և արդյունավետ մեթոդներ ընտրելու խնդիրների լուծմանը:



ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ Գ. Ղազարյան

1. Իհարկե՛, դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակներին: Նա զանազան խաղերի ու մի քանի արդյունարար մեթոդների կիրառմամբ մատչելի կերպով ուսուցանեց թեման: Պարապմունքը հագեցած էր գեղեցիկ երգերով, բանաստեղծական խնդիրներով: Հարկ են համարում նշել, որ պարապմունքի ժամանակ արտասանված քառատողերը, երգված երգերն ու անցկացված խաղերը հորինված էին դաստիարակի կողմից:

Այս աշխատանքներն ուղղված էին թվերի մեջ գույություն ունեցող քանակական հարաբերությունները տարբերակելու, ճիշտ հաշվելու, 1-ից 3-ի սահմաններում պարզ խնդիրները լուծելու կարողությունների զարգացմանը:

2. Չնայած այն բանին, որ պարապմունքը բավականին հագեցած և ծավալուն էր, ու նախատեսված ժամանակից մի փոքր երկար տևեց, այնուամենայնիվ երեխաների մոտ հոգնածություն չնկատվեց ամբողջ պարապմունքի ընթացքում: Նրանք ակտիվորեն մասնակցում էին պարապմունքին, հրճվանքով երգում երգերը, հետաքրքրությամբ և հիացմունքով նայում դիդակտիկ նյութերին:

Նշեմ նաև այն, որ նրանք մեծ սիրով և պատասխանատվությամբ աշխատում էին աշխատանքային կենտրոններում:

3. Իմ կարծիքով՝ շատ մեծ է հետազոտվող թեմայի կարևորությունը նախադպրոցական կրթության մեջ: Ընդհանրապես մաթեմատիկական արդի քաղաքակրթության հիմքերից մեկն է, ընդ որում՝ այն հանդես է գալիս որպես մեր քաղաքակրթության կարևորագույն բաղկացուցիչ մաս: Ըստ այդմ, անհրաժեշտ է, նախադպրոցական տարիքից սկսած, երեխայի մեջ զարգացնել մաթեմատիկական պատկերացումներ՝ նրա մեջ հիմք դնելով մաթեմատիկական մտածողությանը, քանի որ մեզ շրջապատող աշխարհում ամեն ինչ կապված է և կարելի է կապել մաթեմատիկայի հետ:

Մակայն այսքան էլ հեշտ չէ երեխաների մեջ մաթեմատիկական պատկերացումների ճիշտ զարգացման իրականացումը: Դրա համար անհրաժեշտ են ճիշտ մոտեցումներ, հմուտ գործողություններ, արդյունավետ մեթոդների ընտրություն, զարգացմանը նպաստող խաղերի տեղին ընտրություն, նշված թեմայի մատչելի ուսուցում և այլն:

Ահա այսպիսի խնդիրների լուծմանն էլ միտված է սույն հետազոտությունը:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ կատարելով սույն հետազոտությունը, կարող ենք վստահ ասել, որ ճիշտ կազմակերպված պարապմունքները, հետաքրքրաշարժ ու բովանդակալից խաղերը, ճիշտ ընտրված մաթեմատիկական խնդիրները, դաստիարակի ստեղծագործական մոտեցումը և յուրաքանչյուր երեխայի նկատմամբ անհատական յուրահատուկ վերաբերմունքի ցուցաբերումը, իսկապես, նպաստում են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացմանը, ինչի լավագույն ապացույցներից մեկն է մեր իրականացրած պարապմունքը:

Ակնհայտ է, որ վերը նշված բաղադրիչներից որևէ մեկի անտեսման դեպքում, հնարավոր չէր լինի հասնել լավ արդյունքի, և չէինք ունենա ստացված պարապմունք:

1. Ամեն անգամ որևէ պարապմունք պլանավորելիս, ինձ մտահոգում է այն հարցը, որ պարապմունքի համար ընտրված մեծ քանակով դիդակտիկ նյութերը, իմ կողմից հորինված հանելուկները, երգերը, խաղերը կամ խնդիրները հանկարծ կարող են բարդ լինել երեխաների համար, դժվարացնել նոր նյութի հեշտ ըմբռնումն ու ըմնալումը, բայց նույն կերպով՝ ամեն անգամ հաճելիորեն զարմանում և համոզվում են, որ պետք չէ մտահոգվել, անհրաժեշտ է նաև երբեմն ինքնուրույն գործել, ստեղծագործել, քանի որ մենք ավելի լավ ենք ճանաչում մեր սաներին, ծանոթ ենք նրանց ընդունակություններին և ավելի լավ ենք պատկերացնում, թե տվյալ խմբում ինչ ձևով կարելի է ուսուցանել այս կամ այն թեման:
2. Կարծում եմ, որ կարողացա հասնել պարապմունքի նպատակներին, քանի որ երեխաները մեծ ակտիվությամբ մասնակցում էին խաղերին, ճիշտ պատասխանում էին իմ հնչեցրած հարցերին, հետաքրքրությամբ ուսումնասիրում, հաշվում և համեմատում էին պարապմունքի համար նախատեսված դիդակտիկ նյութերը, շատ արագ լուծում էին առաջադրված խնդիրները և սիրով աշխատում էին աշխատանքային կենտրոններում: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ պարապմունքի ընթացքին մասնակցում էին բոլոր երեխաները, թեկուզ մեկ հարցի պատասխանելով: Պարապմունքի ընթացքում հետևել են նաև երեխաների խոսքին, որ նրանք կարողանան խոսել կապակցված և հարցերին պատասխանել լիարժեք նախադասություններով: Պարապմունքի ժամանակ երեխաների մոտ չեմ նկատել հոգնածություն կամ պասիվություն:

3. Անկախ այն բանից, թե ինչ թեմա ենք ուսուցանում, անհրաժեշտ է աշխատանքին մոտենալ մեծ սիրով և պատասխանատվությամբ, որովհետև եթե աշխատենք՝ որպես պարտականության իրականացում, ապա չենք կարող որևէ արդյունքի հասնել:

Եթե պարապմունքը կազմակերպելիս, օրինակ, բացենք որոշ ձեռնարկներ և ուղեցույցներ, այնտեղից ընտրենք թեմային համապատասխան առաջին պատահած պարապմունքներից մեկը, չփոփոխելով ոչինչ, ապա չենք կարող ունենալ ստացված պարապմունք, բացի այդ՝ որպես մանկավարժ, ժամանակի ընթացքում կկորցնենք մեր սերը մանկավարժության նկատմամբ և չենք կատարելագործվի:

Նշված թեման ուսուցանելիս շատ կարևոր է հաշվի առնել տվյալ խմբի սաների մաթեմատիկական ընդունակությունները, որպեսզի կարողանանք ճիշտ ընտրություն կատարել խաղերի և խնդիրների հարցում: Պետք չէ թերագնահատել, և ոչ էլ գերագնահատել երեխաների ունակությունները, որովհետև երկու դեպքում էլ նրանք վնաս կկրեն: Ընդունակությունները գերագնահատելու դեպքում, ուսուցանվող նյութը շատ բարդ կկազմվի և երեխաները ոչինչ չեն ըմբռնի, հակառակ դեպքում՝ նյութը կլինի շատ պարզունակ, և երեխաները չեն ստանա անհրաժեշտ քանակությամբ գիտելիք:

Երբեմն անհրաժեշ է նաև ինքնուրույն ստեղծագործել՝ կազմելով նոր խաղեր ու խնդիրներ, որոնք պետք է նպաստեն տվյալ թեմայի վերաբերյալ երեխաների որոշակի կարողությունների զարգացմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լ. Մանուկյան, Հ. Միտոյան, Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Երևան, 2008, 141 էջ:
2. Լ. Ս. Մետլինա, Մաթեմատիկան մանկապարտեզում, Երևան, <<Լույս>>, 1988, 288 էջ:
3. Հ. Հարությունյան, Խաղալով սովորում ենք մաթեմատիկա, Երևան, 2003, 94 էջ:
4. Հ. Հարությունյան, Մաթեմատիկայի պարապմունքները մանկապարտեզում, Չանգակ հարտ., Երևան, 2016, 184 էջ:
5. Նախաշավիղ 5, Գիտահետազոտական հանդես, Կրթության ազգային ինստիտուտ հրատ., Երևան, 2010, 64 էջ:
6. Ս. Չիրուխյան, Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, Էդիթ Պրինտ, Երևան, 2014, 176 էջ: